ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիրահանգչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ֆիզիրահանգչի /0.75 դրույք / թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

- կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիներ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայությանդեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են

թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ.մայիսի 16-ից մինչև 2022թ հունիսի 10-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ,կիրակի և ո չաշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. հունիսի 17-ին՝ **ժամը 11:00-ին**, «Երևանի հ. 7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Մաշտոցի 45/2 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ /091/48-34-39, /010/ 56-06-07: